ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք. Երևան «01» 12 2023թ N2433-Ա

2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ԾՐԱԳԻՐԸ, 2024 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N658-Լ որոշման հավելվածի 11-րդ կետի 17-րդ ենթակետով և 18-րդ կետի 21-րդ ենթակետով

հրամայում եմ.

1. Հաստատել՝

1) 2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) 2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը ՝ համաձայն N 2 հավելվածի.

3) 2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) լրատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Նելլի Ղուլյանին՝ ապահովել սույն հրամանի տեղադրումը նախարարության պաշտոնական կայքէջում:

3. Նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Սուսաննա Հակոբյանին՝ հրամանը հաստատվելուց հետո 2-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշմամբ սահմանված կարգով ապահովել 2024 թվականի ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման նպատակով կազմակերպության ընտրության մրցութային հանձնաժողովի ստեղծումը:

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

11/22/2023

X

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KEROBYAN VAHAN 1110760124

Հավելված N 1
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2023 թվականի դեկտեմբերի 1-ի
N2433-Ա հրամանի

ԾՐԱԳԻՐ

2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Համաձայն Միավորված ազգերի կազմակերպության զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպություն) բարոմետրի տվյալների՝ 2022 թվականի ընթացքում միջազգային զբոսաշրջությունը սպասվածից առավել բարձր արդյունքներ է գրանցել՝ հաշվի առնելով արդեն հետհամաճարակային իրավիճակում շատ երկրների կողմից ճանապարհորդությունների համար սահմանափակումների վերացման կամ թեթևացման փաստը: 2022 թվականի միջազգային զբոսաշրջային այցելությունների քանակը հասել է շուրջ 900 միլիոնի: Նշված տվյալը կրկնակի գերազանցում է 2021 թվականի նույն ժամանակահատվածի արդյունքը: Այնուամենայնիվ, միջազգային զբոսաշրջության 2019 թվականի արդյունքը դեռևս մնում է անգերազանցելի (-37%): 2022 թվականի ընթացքում վերականգնվել է միջազգային զբոսաշրջության նախահամաճարակային վիճակի 63 %-ը[1]: 2019 թվականի միջազգային այցելությունների համեմատ եվրոպական երկրները գրանցել են շուրջ 21% նվազում (-21%), իսկ Մերձավոր Արևելքի երկրները՝ 17% նվազում (-17%):
2. Միջազգային զբոսաշրջային այցելությունները 2023 թվականի առաջին եռամսյակում հասել են մինչհամաճարակային մակարդակի 80%-ին (-20%՝ 2019թ.-ի առաջին եռամսյակի համեմատ): Միջազգային զբոսաշրջությունը 2023 թվականի 1-ին եռամսյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 86 տոկոսով: Այս ժամանակահատվածում Մերձավոր Արևելքի տարածաշրջանը ապահովել է զբոսաշրջային այցելությունների ամենաբարձր ցուցանիշը՝ 2019թ.-ի նույն ժամանակահատվածի համեմատ վերականգնելով և գերազանցելով մինչհամաճարակային ցուցանիշները 15%-ով: Եվրոպայի տարածաշրջանը 2023 թվականի առաջին եռամսյակում հասել է զբոսաշրջային այցելությունների մինչհամաճարակային մակարդակի 90%-ին:
3. Համաձայն ՀՀ սահմանային անցման կետերով հավաքագրված տվյալների՝ 2022 թվականին զբոսաշրջային այցելությունների 12% նվազում է արձանագրվել (-12%)՝ համեմատած 2019 թվականի

[1] https://webunwto.s3.eu-west-1.amazonaws.com/s3fs-public/2023-01/UNWTO_Barom23_01_January_EXCERPT.pdf?VersionId=_2bbK5GIwk5KrBGJZt5iNPAGnrWoH8NB

հետ: Ի տարբերություն միջազգային զբոսաշրջային այցելությունների վերջնական վերականգնման կանխատեսմանը, ըստ որի, զբոսաշրջային այցելությունների վերականգնումը նախատեսվում է 2024 թվականին՝ դեպի Հայաստան զբոսաշրջային այցելությունների պատկերը 2023 թվականին արդեն կլինի 2019 թվականի արդյունքին գերազանցող: 2023 թվականի հունվար-հոկտեմբերին զբոսաշրջային այցելությունների ընդհանուր քանակը կազմել է շուրջ 2,045,282՝ 2022 թվականի հունվար-հոկտեմբերի համեմատ գրանցելով շուրջ 46 % աճ, իսկ 2019 թվականի հունվար-հոկտեմբերի համեմատ՝ շուրջ 22 %:

Զբոսաշրջային այցելությունները 2018-2022թթ.



4. Համաձայն սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգի տվյալների՝ 2022 թվականի հունվար-հոկտեմբերին ընդհանուր այցելությունների մեջ բացարձակ թվով աճ ապահոված տասը երկրներն են Ռուսաստանի Դաշնությունը, Վրաստանը, Իրանի Իսլամական Հանրապետությունը, ԱՄՆ-ն, Եվրոպական երկրներից Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը, Ֆրանսիան, Ուկրաինան, Բելառուսը, Նիդերլանդները: 2023 թվականի հունվար-հոկտեմբերին առաջին տասնյակում տեղ է զբաղեցրել նաև Չինաստանը:

Ըստ քաղաքացիության	**Զբոսաշրջիկների թվաքանակը**	**Ընդհանուրի մեջ %**
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ	1,036,365	51
ՎՐԱՍՏԱՆ	210,798	10,3
ԻՐԱՆ	128,371	6,2
ԱՄՆ	54,577	3
ԳԵՐՄԱՆԻԱ	25,507	1,2
ՖՐԱՆՍԻԱ	24,970	1
ՀՆԴԿԱՍՏԱՆ	24,520	1
ՈՒԿՐԱԻՆԱ	23,064	1

ՉԻՆԱՍՏԱՆ	17,338	1
ԲԵԼԱՌՈՒՍ	15,486	1

5. Հիմք ընդունելով 2013 թվականին իրականացված զբոսաշրջային այցելությունների վիճակագրական հետազոտության տվյալները՝ փորձագիտական գնահատականներով մեկ ներգնա զբոսաշրջիկի կատարած միջին ծախսը մեկ այցելության ընթացքում գնահատվում է շուրջ 800 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:
6. 2023 թվականին ՀՀ սահմանային անցման կետերում իրականացվում է զբոսաշրջային այցելությունների վիճակագրական 3-րդ հետազոտությունը, ինչը կնպաստի զբոսաշրջային այցելությունների աշխարհագրական բաշխվածության, սեռատարիքային կազմի, ճամփորդության կազմակերպման տարբերակների, զբոսաշրջիկների կատարած ծախսերի կառուցվածքի վերաբերյալ հնարավորինս ճշգրիտ տվյալների ստացմանը և ոլորտում որակյալ հետազոտությունների իրականացմանը:
7. 2023 թվականի հունվար-հունիսին ներքին զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել է շուրջ 321,606՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ապահովելով շուրջ 15.7 % աճ: Ներքին զբոսաշրջության աճին նպաստում է նաև սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայությունը՝ ապահովելով ներքին զբոսաշրջային այցելությունների մինչև 10%-ը:
8. Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական տվյալների՝ 2022 թվականի դրությամբ ՀՀ տարածքում գործում է 1029 հյուրանոցային տնտեսության օբյեկտ, որոնց համարների ընդհանուր քանակը կազմում է շուրջ 10900:

   Նշված հյուրանոցային տնտեսության օբյեկտներից շուրջ 35%-ը գտնվում է Երևանում, շուրջ 65%-ը՝ ՀՀ մարզերում:

2. ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9. Զբոսաշրջության զարգացումը նպաստում է ազգային եկամտի ավելացմանը, համաչափ տարածքային զարգացմանը, բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը:
10. «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» 2024 թվականի ծրագիրն (այսուհետ՝ Ծրագիր) ուղղված է զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականության իրականացմանը, մասնավորապես՝
    1) զբոսաշրջության բնագավառում ինստիտուցիոնալ բարեփոխմանը.

2) զբոսաշրջության բնագավառում ծառայությունների որակի բարելավմանը, միջազգային չափանիշներին համապատասխան որակավորման համակարգի ներդրմանը.
3) Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ճանաչելիության բարձրացմանը և թիրախավորված զբոսաշրջային շուկաներում առավել ակտիվ մարքեթինգային քաղաքականության իրականացմանը.
4) Հայաստանի համայնքներում զբոսաշրջության զարգացմանը, տեղական ավանդույթների վերականգնմանը, զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացմանը, նոր զբոսաշրջային ուղղությունների ձևավորմանը և միջազգային ու ներքին շուկայում պատշաճ ներկայացմանը.
5) զբոսաշրջության ոլորտի վիճակագրական և տեղեկատվական համակարգի կատարելագործմանը:

3. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐԸ

11. Ծրագրի նպատակն է նպաստել.
1) Հայաստան զբոսաշրջային այցելությունների շարունակական ավելացմանը և ներքին զբոսաշրջության խթանմանը.
2) զբոսաշրջիկների՝ Հայաստանում գտնվելու ժամանակահատվածի երկարաձգմանը և ծախսերի հնարավորությունների ընդլայնմանը.
3) համաշխարհային զբոսաշրջային շուկայում Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի զբաղեցրած տեղի և հասանելիության բարձրացմանը՝ ներկայացնելով հայկական զբոսաշրջային արդյունքը չորս հիմնական ուղղություններով՝ մշակութային, բնության, գաստրո (խոհանոց և գինի) և արկածային.
4) Հայաստանի կայուն և համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը.
5) ենթակառուցվածքների և մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը.
6) զբոսաշրջության ոլորտի կրթության բարելավմանը և մասնագիտական որակավորման համակարգի ամրապնդմանը.
7) միջազգային համագործակցության ամրապնդմանը և շարունակական ակտիվացմանը:

12. Ծրագրի խնդիրն է ապահովել.

1) Համաշխարհային զբոսաշրջային շուկայում Հայաստանի ճանաչելիության ավելի բարձր մակարդակը.
2) նոր, մրցունակ զբոսաշրջային արդյունքի առկայությունը.

3) զբոսաշրջության ոլորտում որակի համակարգի կատարելագործմանն ուղղված ենթակառուցվածքների և մարդկային ռեսուրսների զարգացումը.
4) միջազգային, տարածաշրջանային և այլ կազմակերպությունների հետ ակտիվ համագործակցության ապահովումը, այլ երկրների հետ երկկողմ հարաբերությունների զարգացումը.
5) վիճակագրական տվյալների հավաքագրման կայուն մեխանիզմի ստեղծումը:

4. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

13. Ծրագրի իրականացումն ուղղված է Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ճանաչելիության և մրցունակության մակարդակի բարձրացմանը, համաշխարհային շուկայում Հայաստանի՝ որպես կայուն, ապահով, ձեռնարկատիրության, ներդրումների և զբոսաշրջության համար բարենպաստ ու գրավիչ երկրի նկարագրի ամրապնդմանը՝ համաշխարհային շուկայում բարելավելով Հայաստանի վարկանիշը:
14. Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է միջազգային զբոսաշրջիկների թվի ավելացում՝ գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը շուրջ 10%-ով. ինչին կնպաստի հետևյալ միջոցառումների իրականացումը՝
    1) Զբոսաշրջության ոլորտի ինստիտուցիոնալ բարեփոխումների շրջանակում նախատեսվում է զբոսաշրջության ոլորտի իրավական ակտերի և վիճակագրական համակարգի բարելավում, տվյալների հավաքագրում: Նշված արդյունքային ցուցանիշներին հասնելու նպատակով Ծրագրով նախատեսված է երեք միջոցառում.

    ա) «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերի նախագծերի մշակում՝ 1.1 կետ հավելված 2

    բ) **«Զբոսաշրջության ոլորտի վիճակագրական, տեղեկատվական համակարգի բարելավում և սպասարկում»** միջոցառման իրականացմամբ նախատեսվում է՝ *1.1 կետ հավելված 3.*

    - 2023 թ ՀՀ սահմանային անցման կետերում իրականացված Զբոսաշրջային այցելությունների վիճակագրական 3-րդ հետազոտության արդյունքների ամփոփում, տվյալների վերլուծություն,
    - Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգի օգտագործմամբ զբոսաշրջության ոլորտի վիճակագրական տվյալների հավաքագրում՝ ըստ զբոսաշրջային այցելությունների աշխարհագրական բաշխվածության, սեռատարիքային կազմի, ճամփորդության կազմակերպման

տարբերակների, զբոսաշրջիկների կատարված ծախսերի ճշգրիտ տվյալների ստացում և ոլորտում որակյալ հետազոտությունների իրականացում,

-զբոսաշրջության ոլորտի վիճակագրական, տեղեկատվական համակարգի բարելավում և տարեկան սպասարկում:

գ) **«Թրավելինսայթս» (Travelinsights) հարթակում նոր ալգորիթմի ստեղծում և տարեկան սպասարկում» միջոցառման** շրջանակներում նախատեսվում է՝ *1.2 կետ հավելված 3*

-ապահովել զբոսաշրջային ենթակառուցվածքների վերլուծության ֆունկցիոնալություն, որը կվերլուծի յուրաքանչյուր զբոսաշրջային ուղղությանը հատուկ բնութագրերն ու ենթակառուցվածքները՝ ներառելով հյուրանոցներ, ռեստորաններ, թանգարաններ, պատմական վայրեր և այլ տեսարժան վայրեր,

- մի շարք հարթակներում (Tripadvisor.com, Facebook.com, Booking.com) Հայաստանի վերաբերյալ զբոսաշրջիկների գրառումներն ու գնահատականները ինքնաշխատ կերպով իրական ժամանակում հավաքման և վերլուծության իրականացում,

- հարթակի տարեկան սպասարկում՝ արհեստական բանականության գործիքակազմի շարունակական բարելավմամբ և նոր ֆունկցիոնալության ինտեգրմամբ:

2) **Մարքեթինգային քաղաքականության իրականացման** շրջանակներում միջազգային զբոսաշրջային շուկայի և զբոսաշրջության զարգացման միտումների վերլուծության արդյունքում նոր թիրախային երկրների ընտրություն և ակտիվ մարքեթինգային միջոցառումների կազմակերպում: Նշված ցուցանիշն ունենալու համար անհրաժեշտ է ապահովել՝ *կետ 2 հավելված 3.*

ա) Մասնակցություն առնվազն չորս **միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին՝** հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացում՝ ապահովելով յուրաքանչյուր ցուցահանդեսին առնվազն 5 զբոսաշրջային օպերատորի մասնակցություն: Զբոսաշրջության կոմիտեն միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսների մասնակցության ընտրությունը կատարում է՝ հիմնվելով թիրախային (եվրոպական, արաբական, ԱՄՆ) և այլ երկրներում մարքեթինգային գործողությունների, սոցիալական հարթակներում մասնավոր հատվածի շրջանում հարցման, ինչպես նաև Անկախ պետությունների համագործակցության անդամ երկրներում, Պարսից ծոցի արաբական և Եվրոպական միության անդամ պետություններում անցկացվելիք ամենախոշոր

զբոսաշրջային ցուցահանդեսներին մասնակցության նպատակահարմարության սկզբունքի վրա՝ *2.1 կետ հավելված 3.*

բ) **Համագործակցություն առնվազն 4 միջազգային գործընկերների հետ՝** Զբոսաշրջության կոմիտեի կողմից միջազգային ընկերությունների (օրինակ՝ ԲիԲիՍի (BBC), Էքսպիդիա (Expidia) և թիրախային ավիաընկերությունների ընտրությունը կատարվում է՝ հիմնվելով տվյալ թիրախային շուկայի հետ համագործակցության, ինչպես նաև դեպի Հայաստան չվերթեր իրականացնող ավիաընկերությունների («Լուֆթհանզա» (Luftansa), «ԷյրՖրանս» (AirFrance), «ՖլայԴուբայ» (FlyDubai), «Ավստրիական ավիաուղիներ» (Austrian Airlines), «Էգեյան ավիաուղիներ» (Aegean Airlines), «ՖլայԱռնա» (FlyArna) և այլն) հետ համագործակցության շրջանակներում մարքեթինգային ծառայությունների (Հայաստանի մասին տեղեկատվական նյութերի տպագրման, տվյալ ավիաընկերությունների թվային հարթակներում Հայաստանի՝ որպես զբոսաշրջային գրավիչ ուղղության ներկայացման, գովազդների տեղադրման և այլ ծառայությունների) ձեռքբերման համար՝ *2.2 կետ հավելված 3.*

գ) **Հեղինակավոր պարբերականներում Հայաստանի մասին առնվազն 10 գովազդատեղեկատվական հոդվածների պատվիրում՝** ԱՄԷ հայտնի պարբերականում՝ Black Watch Communications LLC, Բրիտանական National Geographic, The Guardian Travel Guide (իրավաբանական անվանումը՝ APL LLC) և BBC Wildlife կամ Հոլդինգի այլ պարբերականներում (BBC Holding), Ֆրանսիական Le Figaro պարբերականում, Ամերիկյան հեղինակավոր՝ Forbes, Lonely planet, New York Times պարբերականներում, ինչպես նաև հեղինակավոր այլ պարբերականներում՝ *2.3 կետ հավելված 3:*

Զբոսաշրջության կոմիտեն միջազգային պարբերականներ ընտրելիս առաջնորդվում է հետևյալ սկզբունքներով՝

- պարբերականի թիրախային լսարանը պետք է համապատասխանի Զբոսաշրջության կոմիտեի տարեկան մարքեթինգային գործողությունների ծրագրում ընդգրկված թիրախային շուկաներին.
- պարբերականը պետք է ունենա ճամփորդական ուղղվածություն, թիրախավորի անհատ զբոսաշրջիկներին, հանդիսանա ոլորտային առցանց հարթակ, որը տեղեկություններ է տրամադրում զբոսաշրջիկներին ճամփորդական ուղղությունների վերաբերյալ.
- պարբերականը պետք է ներկայացված լինի բոլոր հայտնի սոցիալական հարթակներում, ունենա օգտատերերի (ճամփորդողների) շտեմարան, որոնց պարբերաբար ուղարկում է անհատական ծանուցումներ.

- տպագիր ճամփորդական պարբերականի դեպքում, այն պարտադիր պետք է ունենա նաև առցանց հարթակ/կայք, որտեղ տեղ կգտնեն և կտարածվեն պատվիրված հոդվածները նույնպես:

դ) **Թիրախային առնվազն 3 երկրներում գովազդային արշավների** (road show) կազմակերպում՝ ապահովելով յուրաքանչյուր արշավին Հայաստանից առնվազն 3 զբոսաշրջային օպերատորի մասնակցություն՝ *2.4. կետ հավելված 3:*

Զբոսաշրջության կոմիտեի կողմից գովազդային արշավները (road show) ապահովում են երկու երկրների մասնավոր հատվածի համատեղ երկկողմ համագործակցություն (B2B): Զբոսաշրջության կոմիտեի կողմից գովազդային արշավների (road show) կազմակերպման համար երկրների ընտրությունը կատարվում է՝ հիմնվելով թիրախային երկրներում մարքեթինգային գործողությունների, սոցիալական հարթակներում մասնավոր հատվածի շրջանում հարցման, ինչպես նաև եվրոպական, արաբական և այլ երկրներում գովազդային արշավների (road show) իրականացման առաջնահերթության սկզբունքի վրա:

ե**) ճանաչողական այցերի կազմակերպում**՝ թիրախային շուկաներից (եվրոպական, արաբական, ԱՄՆ և այլ երկրներ) այց Հայաստան առնվազն 50 անձանց համար՝ *2.5 կետ հավելված 3.*

զ) **գովազդատեղեկատվական նյութերի** (առնվազն 20 հազար հատ) ստեղծում, ձեռքբերում՝ Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ճանաչելիությանն ուղղված գովազդատեղեկատվական նյութերի ստեղծում, թարգմանություն՝ տարբեր լեզուներով և բովանդակությամբ, տպագրություն *՝2.6 կետ հավելված 3.*

է) **լուսանկարահանում, տեսանկարահանում**՝ Հայաստանի զբոսաշրջային տեսարժան վայրերի լուսանկարահանում, տեսանկարահանում՝ 90-120 վայրկյան (այդ թվում 15վրկ., 30վրկ., 60 վրկ) տևողությամբ առնվազն 6 տեսահոլովակի պատրաստում, տարածում, առնվազն 50 reel ձևաչափով տեսաբազայի ստեղծում, առնվազն 1000 հատ լուսանկարների շարքի ստեղծում՝ ներկայացնելով Հայաստանի մշակութային, գաստրո բնության, արկածային և այլ ուղղությունները՝ *2.7 կետ հավելված 3.*

ը) **թվային և սոցիալական հարթակների վարում**՝ 2024 թվականի ամբողջ տարվա ընթացքում թիրախային (եվրոպական, արաբական, Իրան, ԱՄՆ և այլ) երկրներում, ինչպես նաև Հայաստանում: Հայաստանի մասին իրազեկվածության բարձրացում և նպատակային այցելուների գրավում՝ սոցիալական հարթակներում (FB, Instagram, Tiktok,, YouTube, armenia.travel և այլն) գովազդատեղեկատվական նյութերի տեղադրման միջոցով՝ *2.8 կետ հավելված 3.*

թ) **Armenia.travel վեբ - կայքի սպասարկում և կառավարում, թվային առցանց գործիքների ձեռքբերում՝** Հայաստանը և հայկական զբոսաշրջային արդյունքը ներկայացնող (Armenia.travel) կայքի սոցիալական պաշտոնական էջերի հետևորդների թվային ցուցանիշերի աճի ապահովում, կայքի սպասարկում և կառավարում, թվային առցանց գործիքների ձեռքբերում, կայքի ներքին որոնման համակարգերի գլոբալ օպտիմալացման (SEO) ծառայության մատուցում՝ *2.9 կետ հավելված 3.*

թ) **տեքստային բովանդակության ստեղծում**, այդ թվում՝ Armenia.travel վեբկայքի համար առնվազն 30 բլոգ փոստերի տեքստային բովանդակության ստեղծում անգլերենով: Հայաստանի առնվազն 6 մարզի քարտեզների դարձերեսի համար տեքստային բովանդակության մշակում անգլերենով, մամլո հաղորդագրությունների կազմում: Թարգմանության ապահովում հայերեն, անգլերեն, ռուսերեն, գերմաներեն լեզուներով՝*2.10 կետ հավելված 3.*

ժ) **աջակցություն ՄԱՅՍ (MICE՝** Meetings, Incentives, Conferences, Exhibitions)) միջոցառման՝ (տարբեր թեմաների և ձևաչափերի՝ գործնական հանդիպումներ, իրադարձություններ, կորպորատիվ միջոցառումներ, կոնֆերանսներ, ցուցահանդեսներ, համաժողովներ և այլն) կազմակերպմանը՝ *2.11 կետ հավելված 3:*

3) **Հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացմանը, փաթեթավորմանը և խթանմանն** ուղղված նախատեսվում է աջակցություն Հայաստանում իրականացվող առնվազն յոթ փառատոնի, մեկ ներքին զբոսաշրջային ցուցահանդեսի, առնվազն 1 միջոցառման զբոսաշրջային բաղադրիչին և այլ զբոսաշրջային միջոցառումների կազմակերպմանը՝ *3.1-3.3 կետեր հավելված 3:*

4) **Ենթակառուցվածքների և մարդկային ռեսուրսների զարգացում:** Սույն ենթակետով սահմանված արդյունքին հասնելու նպատակով նախատեսված է աջակցություն՝

- տարեկան առնվազն 5 զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը՝ *4.1 կետ հավելված 3.*
- առնվազն 3 զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը՝ *4.2 կետ հավելված 3.*
- զբոսաշրջության կրթության բարելավմանն ուղղված առնվազն 5 դասընթացի կազմակերպմանը (առնվազն 50 որակյալ վերապատրաստված մասնագետի ապահովում)՝ *4.3 կետ հավելված 3:*

5) զբոսաշրջության ոլորտում ընդլայնված և ակտիվացած **միջազգային համագործակցություն,** այդ թվում՝ առնվազն երկու միջազգային միջոցառումների

կազմակերպում, միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպվող միջոցառումներին մասնակցության ապահովում, երկկողմ և բազմակողմ իրավապայմանագրային պարտավորությունների կատարում՝ *5.1 կետ հավելված 3:*

5. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

15. Զբոսաշրջության զարգացման 2024 թվականի ծրագրի ֆինանսավորման հիմնական աղբյուրը Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեն է, ինչպես նաև՝ օրենքով չարգելված այլ միջոցները (մասնավոր հատվածի և այլ շահագրգիռ կողմերի համաֆինանսավորմամբ): Ֆինանսավորման բյուջեն կազմում է 1500.0 մլն. ՀՀ դրամ:
16. Հավելված 2-ով նախատեսված միջոցառումներն իրականացվում են մրցույթային կարգով՝ բացառությամբ Հավելված 2-ի 2.1, 2.2 և 2.3 կետերով նախատեսված միջոցառումների, որոնք նախատեսվում են իրականացվել օտարերկրյա կազմակերպություններին անմիջական փոխանցմամբ:

Հավելված N 2
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2023 թվականի դեկտեմբերի 1-ի
N2433 - Ա հրամանի

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Վերստուգելի չափանիշը	Կատարողը (համա-կատարողները)	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը
1	2	3	4	5	6	7
			1. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ			
1.1	**Զբոսաշրջության ոլորտը կարգավորող իրավական ակտերի կատարելագործում, մասնավորապես՝ «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերի նախագծերի մշակում**	Համապատասխան ենթաօրենսդրական իրավական ակտերի նախագծերի հաստատում կամ ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	-Զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց վերաբերյալ էլեկտրոնային գրանցամատյանի ներդրում. -Զբոսաշրջային գործունեության սուբյեկտների (զբոսաշրջային օպերատորների, զբոսաշրջային գործակալների) նկատմամբ պահանջների, այդ թվում՝ երաշխիքի պահանջի ներդրում. -Հյուրանոցային տնտեսության օբյեկտների՝ միջազգային չափանիշներին համապատասխան որակավորման համակարգի ներդրում:	Զբոսաշրջության կոմիտե	2024թ. ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջում
1.2	**Զբոսաշրջության ոլորտի վիճակագրական,**	Զբոսաշրջային այցելությունների վիճակագրական 3-րդ հետազոտության տվյալների	Զբոսաշրջային այցելությունների վիճակագրական 3-րդ հետազոտության ամփոփում, վերլուծություն՝	Զբոսաշրջության կոմիտե	2024թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե

	տեղեկատվական համակարգի բարելավում և սպասարկում	հավաքագրում, ամփոփում. վերլուծություն Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգի օգտագործմամբ զբոսաշրջության ոլորտի վիճակագրական տվյալների հավաքագրում. Գործող համակարգչային ծրագրի բարելավում	զբոսաշրջային այցելությունների աշխարհագրական բաշխվածության, սեռատարիքային կազմի, ճամփորդության կազմակերպման տարբերակների, զբոսաշրջիկների կատարված ծախսերի կառուցվածքի վերաբերյալ ճշգրիտ տվյալների ստացում և ոլորտում որակյալ հետազոտությունների իրականացում, ամփոփում. Զբոսաշրջության ոլորտի վիճակագրական, տեղեկատվական համակարգի բարելավում և տարեկան սպասարկում			
1.3	**Travelinsights հարթակում նոր ալգորիթմի ստեղծում և տարեկան սպասարկման ապահովում**	Travelinsights հարթակում նոր ալգորիթմի ստեղծում և տարեկան սպասարկման ապահովում	Travelinsights հարթակում ալգորիթմի ստեղծում Travelinsight.ai տարեկան սպասարկում	Զբոսաշրջության կոմիտե	2024թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ
2. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԵՎ ԽԹԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ						
2.1	**Մասնակցություն միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին**	Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացում ու խթանում. հայկական և օտարերկրյա զբոսաշրջային օպերատորների միջև գործարար կապերի հաստատում. ցուցահանդեսներին պատշաճ մասնակցություն	Առնվազն 4 միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին մասնակցություն՝ ապահովելով յուրաքանչյուր ցուցահանդեսին առնվազն 5 զբոսաշրջային օպերատորի մասնակցություն	Զբոսաշրջության կոմիտե (Միջազգային ցուցահանդես կազմակերպող արտերկրյա կազմակերպություն)	2024թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

			(մասնակցությունը ըստ Զբոսաշրջության կոմիտեի ընտրության)			
2.2	**Համագործակցություն միջազգային գործընկերների հետ**	Հայաստանի մասին տեղեկատվական նյութերի տպագրում, միջազգային ընկերությունների կամ ավիաընկերությունների թվային հարթակներում Հայաստանի՝ որպես զբոսաշրջային գրավիչ ուղղության ներկայացնում, գովազդների տեղադրում Համագործակցություն միջազգային տարբեր ընկերությունների (օրինակ՝ BBC, Expidia և այլ) հետ, ինչպես նաև դեպի Հայաստան չվերթեր իրականացնող ավիաընկերությունների հետ	Առնվազն 4 միջազգային գործընկերների հետ համագործակցության շրջանակներում մարքեթինգային ծառայությունների ձեռքբերում (գործընկերները ընտրվում են Զբոսաշրջության կոմիտեի կողմից)	Զբոսաշրջության կոմիտե (Միջազգային կազմակերպություններ, ավիաընկերություններ շահագործող արտերկրյա կազմակերպություններ)	2024 թ ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ
2.3	**Հեղինակավոր պարբերականներում Հայաստանի մասին գովազդատեղեկատվական հոդվածների պատվիրում**	Հայաստանի մասին հոդվածների տպագրում՝ ներկայացնելով Հայաստանը որպես զբոսաշրջային գրավիչ ուղղություն և ծրագրավորելով Հայաստան այցելությունը՝ որպես առաջիկա ճանապարհորդությունների մեջ առաջնահերթություն	Առնվազն 10 հեղինակավոր պարբերականներում Հայաստանը ներկայացնող նյութերի հրապարակում (միջոցառումն իրականացնել Զբոսաշրջության կոմիտեի պատվերին համապատասխան)	Զբոսաշրջության կոմիտե (Օտարերկրյա հեղինակավոր պարբերականներ ներկայացնող արտերկրյա կազմակերպություններ)	2024 թ ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ
2.4	**Թիրախային երկրներում գովազդային**	Հայաստանի, որպես կայուն, ապահով, ձեռնարկատիրության, ներդրումների և զբոսաշրջության	Հայաստանը ներկայացնող առնվազն 3 գովազդային արշավի **(road show)** իրականացում	Զբոսաշրջության կոմիտե	2024 թ ընթացքում	ՀՀ պետական բյուջե

	արշավների (road show) կազմակերպում	համար բարենպաստ ու գրավիչ երկրի նկարագրի ամրապնդում, զարգացում և խթանում Թիրախային երկրներում գովազդային արշավների (road show) կազմակերպում՝ թիրախային երկրների զբոսաշրջային օպերատորներին Հայաստանի զբոսաշրջային առաջարկների ներկայացում. Զբոսաշրջային ընկերությունների ներկայացուցիչների հետ հետագա համագործակցության համար կապերի հաստատում. Հայաստանի ճանաչելիության բարձրացում	թիրախային երկրներում՝ ապահովելով յուրաքանչյուր արշավին Հայաստանից առնվազն 3 զբոսաշրջային օպերատորի մասնակցություն (շնորհանդեսների, հայկական զբոսաշրջային արդյունքի ներկայացում, երկու երկրների մասնավոր հատվածի համատեղ երկկողմ համագործակցության (B2B) ապահովում) (թիրախային երկրները ընտրվում են Զբոսաշրջության կոմիտեի կողմից)			օրենքով չարգելված այլ աղբյուրներ
2.5	**Ճանաչողական այցերի կազմակերպում**	Ճանաչողական այցերի կազմակերպում Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ճանաչելիության բարձրացում. Զբոսաշրջային հոսքերի ավելացում	Զբոսաշրջային տարբեր թիրախային երկրներից առնվազն 50 անձանց համար ճանաչողական այցերի կազմակերպում՝ ներառելով հյուրանոցային, տրանսպորտային, զբոսավարի, սննդի ծառայություններ (թիրախային երկրները ընտրվում են Զբոսաշրջության կոմիտեի կողմից)	Զբոսաշրջության կոմիտե	2024թ. ընթացքում	<< պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ
2.6	**Գովազդատեղեկատվական նյութերի ստեղծում, ձերքբերում**	Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացման և խթանման նպատակով գովազդատեղեկատվական նյութերի ստեղծում, թարգմանություն՝	Առնվազն 20.000 հատ գովազդատեղեկատվական նյութեր՝ բրոշյուր, քարտեզ, տեղեկատվական թերթիկ և այլ նյութեր	Զբոսաշրջության կոմիտե	2024թ. ընթացքում	<< պետական բյուջե օրենքով չարգելված այլ

		տարբեր լեզուներով և բովանդակությամբ և տպագրություն	(միջոցառումն իրականացնել Զբոսաշրջության կոմիտեի պատվերին համապատասխան)			աղբյուրներ
2.7	Լուսանկարահանում, տեսանկարահանում	Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացում և խթանում Լուսանկարների և տեսանյութերի բազայի ձևավորում, համալրում	1) 90-120 վայրկյան (այդ թվում 15վրկ., 30վրկ., 60 վրկ) տևողությամբ առնվազն 6 տեսահոլովակի պատրաստում և տարածում 2) առնվազն 50 reel ձևաչափով տեսաբազայի ստեղծում՝ մարքեթինգային տեսանյութեր պատրաստելու և տարածելու նպատակով 3) առնվազն 1000 հատ լուսանկարների շարքի ստեղծում՝ ներկայացնելով Հայաստանի մշակութային, գաստրո բնության, արկածային և այլ ուղղությունները (միջոցառումն իրականացնել Զբոսաշրջության կոմիտեի պատվերին համապատասխան)	Զբոսաշրջության կոմիտե	2024թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ
2.8	**Թվային և սոցիալական հարթակների վարում**	Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի համաշխարհային շուկաներում պատշաճ ներկայացում և խթանում՝ Հայաստանի մասին իրազեկվածության բարձրացում. Հայաստանի զբոսաշրջային արդյունքի վերաբերյալ տեղեկատվության տարածում թվային հարթակներում	Ամբողջ տարվա ընթացքում թվային և սոցիալական հարթակների վարում թիրախային (եվրոպական, արաբական, Իրան, ԱՄՆ և այլ) երկրներում, ինչպես նաև Հայաստանում: Հայաստանի մասին իրազեկվածության բարձրացում և նպատակային այցելուների գրավում՝ սոցիալական հարթակներում (FB, Instagram, Tiktok,YouTube,	Զբոսաշրջության կոմիտե	2024թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ

		Թվային և սոցիալական հարթակների վարում նպատակային այցելուների գրավում.	armenia.travel և այլն) գովազդատեղեկատվական նյութերի տեղադրում թիրախային երկրներում: (թիրախային երկրները ընտրվում են Զբոսաշրջության կոմիտեի կողմից)			
2.9	**Armenia.travel վեբ - կայքի սպասարկում և կառավարում, թվային առցանց գործիքների ձեռքբերում**	Հայաստանը և հայկական զբոսաշրջային արդյունքը ներկայացնող (Armenia.travel) կայքի սոցիալական պաշտոնական էջերի հետևորդների թվային ցուցանիշերի աճի ապահովում, կայքի սպասարկում և կառավարում, թվային առցանց գործիքների ձեռքբերում. կայքի ներքին որոնման համակարգերի գլոբալ օպտիմալացման (SEO) ծառայության մատուցում Թվային մարքեթինգային գործիքների միջոցով իրականացվող ծրագրերի՝ այդ թվում մարքեթինգային և խթանման միջոցառումների արդյունավետության բարձրացում	Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ներկայացման համար Armenia.travel կայքի անխափան աշխատանքի ապահովում, տեխնիկական սպասարկում (12 ամիս), կայքի շահագործման ընթացքում առաջացած տեխնիկական խնդիրների լուծում, կառավարում, ինչպես նաև Զբոսաշրջության կոմիտեի սոցիալական հարթակներում պաշտոնական էջերի վարման, գովազդների ակտիվացման աջակցություն. Վեբ կայքի և զբոսաշրջության կոմիտեի տարբեր ծրագրերի համար անհրաժեշտ թվային առցանց գործիքների ձեռքբերում՝ ծրագրերի արդյունավետ իրականացումն ապահովելու համար Կայքի ներքին որոնման համակարգերի գլոբալ օպտիմալացման (SEO) ծառայության մատուցում	Զբոսաշրջության կոմիտե	2024թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե

2.10	**Տեքստային բովանդակության ստեղծում**	Հայաստանի զբոսաշրջային առաջարկը ներկայացնող մրցունակ տեքստային բովանդակության մշակում, թարգմանություն՝ըստ անհրաժեշտության	Armenia.travel վեբկայքի համար առնվազն 30 բլոգ փոստերի տեքստային բովանդակության ստեղծում անգլերեն լեզվով: Հայաստանի առնվազն 6 մարզի քարտեզների դարձերեսի համար տեքստային բովանդակության մշակում անգլերեն լեզվով: Առնվազն 25 հատ մամլո հաղորդագրության կազմում՝ անգլերեն լեզվով: Թարգմանության ապահովում՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն, գերմաներեն լեզուներով (միջոցառումն իրականացնել Զբոսաշրջության կոմիտեի պատվերին համապատասխան)	Զբոսաշրջության կոմիտե	2024թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե
2.11	**Աջակցություն ՄԱՅՍ (MICE՝ Meetings, Incentives, Conferences, Exhibitions) միջոցառման կազմակերպմանը**	Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացում և խթանում՝ ճանաչելիության բարձրացում	Հայաստանում իրականացվող առնվազն 1 **ՄԱՅՍ (MICE՝** Meetings, Incentives, Conferences, Exhibitions) միջոցառման՝ գործնական հանդիպումների, համաժողովների, իրադարձությունների, կոնֆերանսների, ցուցահանդեսների կազմակերպմանն աջակցություն (միջոցառումն իրականացնել Զբոսաշրջության կոմիտեի պատվերին համապատասխան)	Զբոսաշրջության կոմիտե	2024թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե

3. ՀԱՅԿԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑՈՒՄ, ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԽԹԱՆՈՒՄ						
3.1	**Աջակցություն Հայաստանում փառատոների կազմակերպմանը**	Համայնքներում զբոսաշրջության և համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը նպաստում. Հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում՝ տեղական ավանդույթների ու մշակույթի վերականգնում, հյուրընկալող և շրջակա համայնքներում տնտեսական և մարդկային ներուժի բացահայտում ու զարգացում	Հայաստանում առնվազն 7 փառատոնի կազմակերպմանը աջակցություն	Զբոսաշրջության կոմիտե	2024թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ
3.2	**Զբոսաշրջային ներքին ցուցահանդեսի կազմակերպում և խթանում**	Ներքին զբոսաշրջության զարգացում համագործակցություն Հայաստանի բոլոր մարզերի հետ՝ զբոսաշրջային առաջարկների ներկայացում, գործարար կապերի հաստատում	Ներքին ցուցահանդեսի կազմակերպում և խթանում	Զբոսաշրջության կոմիտե	2024թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ
3.3	**Աջակցություն Հայաստանում իրականացվող միջոցառումների զբոսաշրջային բաղադրիչին**	Զբոսաշրջային առաջարկի հարստացում. զբոսաշրջային շուկայում Հայաստանի մրցունակության բարձրացման համար նոր զբոսաշրջային առաջարկի ստեղծում	Հայաստանում իրականացվող առնվազն 1 միջոցառման զբոսաշրջային բաղադրիչին աջակցություն (միջոցառումն իրականացնել Զբոսաշրջության կոմիտեի պատվերին համապատասխան)	Զբոսաշրջության կոմիտե	2024թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ

4. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ						
4.1	**Պետական աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը**	Հայաստանում զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների միասնական համակարգի ձևավորում՝ տեղեկատվական և մասնագիտական տեղեկատվության տրամադրում, գովազդատեղեկատվական նյութերի տարածում, առնվազն մեկ միջոցառման կազմակերպում կամ աջակցություն	առնվազն 5 զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը աջակցություն. Առնվազն մեկ միջոցառման կազմակերպում կամ աջակցություն	Զբոսաշրջության կոմիտե	2024թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ
4.2	**Պետական աջակցություն զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը**	Մարզի զբոսաշրջային ներուժի վերհանում. Առնվազն 3 զբոսաշրջային նոր արդյունքների ստեղծում Զբոսաշրջության դիվերսիֆիկացում՝ նոր զբոսաշրջային ուղղությունների ու պրոդուկտների ստեղծում, ամեն մարզում առնվազն մեկ նոր առաջարկի ձևավորում	ՀՀ մարզերում առնվազն 3 զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը աջակցություն Զբոսաշրջության դիվերսիֆիկացում (նոր զբոսաշրջային ուղղությունների ու պրոդուկտների ստեղծում), ամեն մարզում առնվազն մեկ նոր առաջարկի ներկայացում, ձևավորում	Զբոսաշրջության կոմիտե	2024թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ
4.3	**Զբոսաշրջության կրթության բարելավում**	Զբոսաշրջության ոլորտը բարձրակարգ կադրերով ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացում	- առնվազն 5 դասընթաց - առնվազն 50 որակյալ վերապատրաստված մասնագետ - Զբոսաշրջության/ հյուրընկալության ոլորտի աշխատողների համար վերապատրաստման հասանելիության ապահովում մարզերում	Զբոսաշրջության կոմիտե	2024 թ ընթացքում	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ

5. Միջազգային համագործակցություն						
5.1	**Միջազգային միջոցառումների կազմակերպում**	Միջազգային համագործակցության ամրապնդում և ակտիվացում, միջազգային և տարածաշրջանային համագործակցության շրջանակներում միջոցառումների կազմակերպում	Զբոսաշրջության ոլորտում ընդլայնված և ակտիվացած միջազգային համագործակցություն, այդ թվում առնվազն երկու միջազգային միջոցառման կազմակերպում Միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպվող միջոցա-ռումներին մասնակցության ապահովում, Երկկողմ և բազմակողմ իրավապայմանագրային պարտավորությունների կատարում (միջոցառումն իրականացնել Զբոսաշրջության կոմիտեի պատվերին համապատասխան)	Զբոսաշրջության կոմիտե	2024թ. ընթացքում	<< պետական բյուջե

Հավելված N3
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2023 թվականի դեկտեմբերի 1-ի 2433 -Ա հրամանի

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ
«ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ»
2024 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

(հազար ՀՀ դրամ)

հոդված		ԾԱԽՍԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	չափման միավոր	քանակ	2024թ. ՀՀ պետական բյուջեից հատկացվելիք գումարները	ԱԱՀ	2024թ. Ընդամենը ՀՀ պետական բյուջեից հատկացվելիք գումարները
	1	**1. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ**			**13333.2**	**666.8**	**14000.0**
4639	1.1	Զբոսաշրջության ոլորտի վիճակագրական, տեղեկատվական համակարգի բարելավման և սպասարկման	ամիս	12	3333.2	666.8	4000.0
4621	1.2	Travelinsights հարթակում նոր ալգորիտմի ստեղծում և տարեկան սպասարկում	ամիս	12	10000.0	0.0	10000.0
	2	**ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԵՎ ԽԹԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ**			**842481.5**	**92518.5**	**935000.0**
4239	2.1	Մասնակցություն միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին	հատ	առնվազն 4	180000.0	0.0	180000.0
4239	2.2	Համագործակցություն միջազգային գործընկերների հետ	հատ	առնվազն 4	100000.0	0.0	100000.0
4239	2.3	Հեղինակավոր պարբերականներում Հայաստանի մասին գովազդատեղեկատվական հոդվածների պատվիրում	հատ	առնվազն 10	100000.0	0.0	100000.0
4639	2.4	Թիրախային երկրներում գովազդային արշավների (road show) կազմակերպում	հատ	առնվազն 3	62497.5	12502.5	75000.0
4639	2.5	Ճանաչողական այցերի կազմակերպում՝ առնվազն 50 անձ	անձ	առնվազն 50	58331.0	11669.0	70000.0
4639	2.6	Գովազդատեղեկատվական նյութերի ստեղծում, ձեռքբերում	հատ	առնվազն 20000	41665.0	8335.0	50000.0
4639	2.7	Լուսանկարահանում, տեսանկարահանում	ամիս	12	24999.0	5001.0	30000.0
4639	2.8	Թվային և սոցիալական հարթակների վարում	ամիս	12	58331.0	11669.0	70000.0
4639	2.9	Armenia.travel վեբ - կայքի սպասարկում և կառավարում, թվային առցանց գործիքների ձեռքբերում	ամիս	12	33332.0	6668.0	40000.0
4639	2.10	Տեքստային բովանդակության ստեղծում	ամիս	12	16666.0	3334.0	20000.0
4639	2.11	Աջակցություն ՄԱՅՍ (MICE՝ Meetings, Incentives, Conferences, Exhibitions) միջոցառում կազմակերպմանը	հատ	առնվազն 1	166660.0	33340.0	200000.0
	3	**ՀԱՅԿԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑՈՒՄ, ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԽԹԱՆՈՒՄ**			**221657.8**	**44342.2**	**266000.0**
4639	3.1	Աջակցություն Հայաստանում փառատոների կազմակերպմանը	հատ	առնվազն 7	145827.5	29172.5	175000.0
4639	3.2	Զբոսաշրջային ներքին ցուցահանդեսի կազմակերպում և խթանում	հատ	առնվազն 1	41665.0	8335.0	50000.0
4639	3.3	Աջակցություն Հայաստանում իրականացվող միջոցառումների զբոսաշրջային բաղադրիչին	հատ	առնվազն 1	34165.3	6834.7	41000.0
	4	**ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ**			**99996.0**	**20004.0**	**120000.0**
4639	4.1	Աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը	հատ	առնվազն 5	12499.5	2500.5	15000.0
4639	4.2	Աջակցություն զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը	հատ	առնվազն 3	29165.5	5834.5	35000.0
4639	4.3	Զբոսաշրջության կրթության բարելավում,	հատ	առնվազն 5	58331.0	11669.0	70000.0
	5	**Միջազգային համագործակցություն**			**137494.5**	**27505.5**	**165000.0**
4639	5.1	Միջազգային միջոցառումների կազմակերպում	հատ	առնվազն 2	137494.5	27505.5	165000.0
		ԸՆԴԱՄԵՆԸ			**1314963.0**	**185037.0**	**1500000.0**